# Արվեստի վաստակաշատ գործիչը

## ԼՐԱՆՈՒՄ Է ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 105-ԱՄՅԱԿԸ



Վաստակաշատ և մեծանուն գրականագետ, թատերագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Ռուբեն Վարոսի Զարյանը (Ղապանցյան) ծնվել է 1909 թվականի սեպտեմբերի 1-ին Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքում: Նրա մանկությունն ու պատանեկությունն անցել են Թիֆլիսում: Այստեղ յոթնամյակը ավարտելուց հետո նա կրթությունը շարունակել է Ալեքսանդր Մյասնիկյանի անվան մանկավարժական ուսումնարանում: Երեք տարի ուսուցիչ է եղել Ախալքալաքում: 1936 թվականին, ընդամենը երկուսուկես տարի սովորելուց հետո, ավարտել է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը: 1938-1947 թվականներին վարել է Հայպետհրատի նախ մանկապատանեկան, ապա՝ գեղարվեստական գրականության բաժնի վարիչի, իսկ 1941-1943 թվականներին "Սովետական գրականություն" ամսագրի խմբագրի պաշտոնները: Այնուհետև եղել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դասախոս, ԳԱ արվեստների գիտության և պատմության սեկտորի վարիչ, իսկ 1956-ից, Արվեստի ինստիտուտի հիմնադրման օրից մինչև 1987 թվականը՝ նրա դիրեկտորը: Մշակութային գործունեության այս օջախը, որը նա հիմնադրեց ու գլխավորեց, վերածվել է ազգային գեղարվեստի մի իսկական դպրոցի: Ռուբեն Զարյանի դերն այս գործում անչափ մեծ է: Նա իրոք որ օժտված էր հոգևոր մշակույթի տնօրինման հազվագյուտ ունակությամբ:

Թատերական արվեստի ականավոր տեսաբան Ռուբեն Զարյանի ստեղծագործական եռանդն ու մղումները բազմապատկվել են իր ապրած տարիների հետ միասին: Նա գրում ու հրապարակում էր նոր գրքեր, հանդես գալիս պեկուցումներով ու քննադատական հոդվածներով, ակտիվորեն մասնակցում մեր արվեստի շուրջ ընթացող գրավոր ու բանավոր ասուլիսին: Նա մեկն էր այն երջանիկ մարդկանցից, որոնց համար կյանքը սեփական հնարավորությունների լիակատար դրսևորման ու ծրագրումների անխափան իրագործման միջոց է:

Ռուբեն Զարյանը լայն մթնոլորտի մարդ էր, նրան գիտեին գրականության և արվեստի ամենայն բնագավառներում: Կարդում են: Սիրում:

Երկար ու դժվարին ճանապարհ է քայլել նա: Որոնումների, ոգևորությունների, ինչպես նաև հիասթափությունների միջով է անցել նրա ուղին: Տակավին պատանի էր, երբ կախարդվեց թատրոնի անբացատրելի հմայքով, և դերասան դառնալը եղավ նրա երազանքը: Սակայն կյանքը մղեց նրան դեպի գրականություն, և որ խառնվածքով գրող է Ռուբեն Զարյանը, այդ երևում է ոչ միայն նրա առաջին "Թեյարանի տղան" պատմվածքից, այլև նրա գրականագիտական, թատերագիտական բազմաթիվ ուսումնասիրություններից ու հուշապատումներից:

Նախ և առաջ Ռուբեն Զարյանը ձեռնարկում է հայ նորագույն բանաստեղծության հիմնադիր Հովհաննես Հովհաննիսյանի երկերի գիտական ժողովածուի հրատարակությունը, ծրագրվում է երկու հատոր, բայց լույս է տեսնում միայն չափածոյին նվիրված գիրքը (1937), որին հաջորդում են Նար-Դոսի երկերի լիակատար ժողովածուի յոթ հատորները: Այնուհետև նա լույս է ընծայում Վահրամ Փափազյանի ընտիր երկերի երկհատորյակը (1939-1940): Ավելի ուշ հրատարակության է պատրաստում Գաբրիել Սունդուկյանի երկերի քառահատորյակի առաջին երեք գրքերը (1951-1952):

1930-ական թվականների մեր գրական կյանքի մեծագույն իրադարձություններից մեկը Խաչատուր Աբովյանի գրական ժառանգության, իբրև մարդու և ստեղծագործող անհատականության, հայտնագործումն էր, որին ապդակ ծառայեցին նրա հարյուրների հասնող անտիպ ու անհայտ երկերի հայտնությունը, շնորհիվ այն ավնիվ ընդառաջման ու ըմբռնման, որ հանդես բերին մեծ գրողի թոռները՝ Հայաստանի գրական թանգարանին հանձնելով Խ. Աբովյանի արխիվը: Հսկայական էր նյութը. թարմ էր նաև հետազոտողի հայացքը: Շուրջ երկուսուկես տարվա ընթացքում Ռ. Զարյանը տպագրության է պատրաստում և հաջորդաբար լույս ընծայում Խաչատուր Աբովյանի բայաթիների ընտրանին (1939), "Վերք Հայաստանի" պատմավեպի սովետական առաջին և ըստ ամենայնի, գոհացուցիչ հրատարակությունը, ընտիր երկերի երկհատորյակը (1939-1940), ծրագրում է մի երրորդ հատոր ևս, բայց սկսված պատերազմը խանգարեց...

Այս տարիներին լույս է տեսնում նաև մի աշխատություն, որը պետք է նոր խոսք ասեր աբովյանագիտության մեջ, դա "Նախաշավիղի" պատմությանը նվիրված հետազոտությունն էր, որի համար Զարյանը 1940 թվականին ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Դրան հետևում են ուսումնասիրություններ՝ նվիրված Աբովյանի կյանքի անհայտ կողմերին: Դրանց մի մասը հետագայում ամփոփվում է "Աբովյանի կյանքից նորահայտ էջեր" աշխատության մեջ: Զարյանի աբովյանական ուսումնասիրությունների պսակն է հանդիսանում մի ոչ մեծ գիրք, որին վիճակված էր լայն ժողովրդայնություն: Դա "Աբովյանի կյանքն" էր իր հարուստ բովանդակությամբ և գիտական սկզբունքով, որն իր ընդարձակ և համառոտ տարբերակներով ունեցել է վեց հրատարակություն, ապա և թարգմանվել է ռուսերեն ու իսպաներեն, որ աննախադեպ երևույթ էր մեր գրականության առօրյայում:

Սակայն ամենից առաջ արտիստ էր Ռուբեն Զարյանը: Ինչ էլ որ նա գրում էր՝ պատմվածք, հուշ, գրախոսություն, գեղագետ է նա, գեղեցիկն ընկալող, պաշտող ու բացահայտող: Եվ հավատարիմ իր արտիստական խառնվածքին, նա նվիրվեց արվեստին: Իր կյանքի ավելի քան վեց տասնամյակները նա իմաստավորեց գրականության և արվեստի, հատկապես հայ թատրոնի և դերասանական արվեստի առեծվածային հարցերը լուսաբանելով, մեկնաբանեց ու բնութագրեց գրականության ու արվեստի թատրոնի դերասաններին, ձգտեց լուսաբանել նրանց ժառանգության չափն ու կշիռը: Շնորհիվ իր վառ երևակայության, նրբին կռահումների, անվանի արվեստաբանն իր ուսումնասիրություններով հասել է փայլուն արդյունքների:

Դեռ պատանի, կախարդված լինելով թատրոնի ու գրականության անբացատրելի հմայքով, շփվեց ու մտերմացավ անվանի դերասաններին ու գրողներին: Եվ այդ է պատճառը, որ նրա ուսումնասիրությունները՝ նվիրված Ավետիք Իսահակյանին, Արուս Ոսկանյանին, Վահրամ Փափազյանին, Սիրանույշին, Վարդան Աճեմյանին, որքան գիտական, այնքան էլ մտերմիկ են և ընթերցվում են մեծ հափշտակությամբ: Սրանք փայլուն գործեր են, որոնք բարձր հեղինակությամբ պսակեցին շնորհաշատ արվեստաբանին: Նա կարողանում էր գիտությունը ներկայացնել բանաստեղծորեն-արտիստորեն: Ակդու էր Ռուբեն Զարյանի խոսքը՝ ներշնչված ու խանդավառ: Նրա գործերը ընթերցողի մեջ պատվաստում են գեղարվեստի ու գեղեցիկի ճաշակ...

Անվանի արվեստաբանը ոչ միայն գործ չի արել առանց սիրահարված լինելու այդ գործին, ոչինչ չի ձեռնարկել, առանց ներդնելու իր ամբողջ ունեցածը:

Ռուբեն Զարյանն ընթերցող հասարակայնությանն է ներկայանում նաև իր տաղանդի նոր կողմերով՝ հուշագրողի նախանձելի կարողություններով և գրողի ինքնատիպ ոճով: Նրա պատումների մեջ վերակենդանանում են հայոց նոր ու ժամանակակից գրականության շատ մեծեր, պատկառելի հայագետներ, արվեստի աշխարհի մարդիկ, պետական ու հանրային գործիչներ, մանկավարժներ... Հայ մշակույթի մեծ երախտավորներին նվիրված իր հուշերը նա ամփոփել է "Հուշապատում" եռհատոր աշխատության մեջ:

Ռուբեն Զարյանի նախաձեռնությամբ Հայաստանի ԳԱ ինստիտուտում ստեղծվել է Շեքսպիրական գրադարան և հայկական շեքսպիրագիտական կենտրոն: Հայ թատրոնի պատմության ժամանակակից գիտությունը ընդհանրապես և հայ շեքսպիրագիտությունը մասնավորապես դարձել են Ռուբեն Զարյանի կենսագրության մասը: Նա շեքսպիրագիտական կենտրոնի ղեկավարն էր ու տարեգիրը, "Շեքսպիրականի" խմբագիրը:

Անվանի գիտնական Ռուբեն Զարյանը նաև հայտնի հասարակական գործիչ էր: Նա 1974-ից 1981 թվականը գրականության, արվեստի և ճարտարապետության Հայաստանի պետական մրցանակների հանձնաժողովի նախագահն էր:

Ռուբեն Զարյանի ծառայությունները բարձր են գնահատված: Նա պարգևատրված է Ժողովուրդների բարեկամության և "Պատվո նշան" շքանշաններով, մի շարք մեդալներով:

Վաստակաշատ արվեստաբանը մահացել է 1994 թվականի փետրվարի 2-ին:

**Սիրելի ընթերցողներ, "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2014 թ. 2-րդ կիսամյակի համար երկարացված է մինչև հուլիսի 10-ը:**

**Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում: Վեց ամսվա համար բաժանորդագրության գինը կազմում է 348 ռուբլի 42 կոպեկ:**